

36. ՊՕՂՈՍ ՊԻՐՈՄԱԼԼԻ ԵՒ ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Պօղոս Պիրոմալլի (Paolo Piromalli), ծնած 1592ին ի Սիզեոնոյ Կալարրիոյ, մտած էր Գոմինիկեան կարգը եւ համբաւուած իւր գիտութեամբ¹ : 1631 Մայիս 30ին հրամանաւ Ուրբանոս Ը-ի ուղարկուեցաւ Հայաստան² իբրեւ «գլուխ Հայաստանի առաքելութեան» եւ վարիչ (rettore) Նախիջեւանի 1630ին բացուած Գարատան³ :

1632, Ապրիլ 13ին (Ծաղկազարդ) կը հասնի Ապարաներ, ուր կը գտնէ 300 տուն կաթողիկէ Հայեր⁴ (Մխարանողք) : Անկէ շուտով կը մեկնի Գանձակ (Ապրիլ 18էն յառաջ⁵) . ասկէ կը գրէ իւր չարահամբաւ թուղթն առ Քահանայապետն (23 Ապրիլ)⁶, որով կ'ամբաստանէր Մխարանող Եղբայրներն եւ Նախիջեւանի հայ արքեպիսկոպոսն Աւգոստինոս Բաջենց :

Կը վերադառնայ Ապարաներ. հոս էր 1—18 Յունիս⁷ : Կ'երեւայ թէ լսուած էր հոս

¹ Michelangelo Macri, Memorie storico-critiche intorno alla vita e alle opere di monsignor Fra Paolo Piromalli. Napoli 1824.

² Acta S. C., an. 1631, p. 75.

³ Prop. Scritturi riferiti nei Congressi Armeni dal 1430 al 1670, vol. 1.

⁴ Մխական, 395:

⁵ Prop. Armenia, vol. 104, p. 186, 189, 198, կը պարունակէ երեք նամակ գրուած Պիրոմալլիէն 1632, Ապրիլ 18ին, 22ին եւ 23ին ի Գանձակ (Cianch) :

⁶ Անդ, p. 186:

⁷ Ունի թղթեր, գրուած Ապարաներէ Յունիս 1ին, 17ին եւ 18ին. անդ, p. 184, 190 եւ 199: